ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 105

«04» 03 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 44 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանցավորության շարժընթացում արձանագրվող միտումները, քրեական արդարադատության ոլորտում շարունակաբար զարգացող միջազգային չափանիշների ներդրման անհրաժեշտությունը, քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունմամբ դատավարական նոր ընթացակարգերի նախատեսումը պայմանավորում են դատախազության գործունեության գիտականորեն հիմնավորված և միջազգային լավագույն փորձի վրա հիմնված շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը: Բացի այդ, պետական շահերի պաշտպանության ոլորտում վերջին տարիներին դատախազության կողմից իրականացված աշխատանքների նկատելի աճը, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում դատախազության ներգրավվածությունը ևս անհրաժեշտություն են առաջացնում նորարարական մոտեցումներ և ուղղություններ ներդնել դատախազության աշխատանքներում՝ հիմնված համապարփակ գիտական հենքի և առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

Վերը նշված նպատակով և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհրդի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» 2013 թվականի սեպտեմբերի 6-ի N 44 հրամանը:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 1

ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի
սեպտեմբերի -ի N հրամանի

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհրդի

1. Դավիթ Մելքոնյան - ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
2. Աննա Մարգարյան – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր,
3. Տաթևիկ Դավթյան - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
4. Տիգրան Մարկոսյան – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
5. Տիրայր Վարդազարյան - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
6. Արթուր Չախոյան - ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ,
7. Կարեն Բիշարյան - ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,
8. Արմեն Մարուխյան – ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ,
9. Վահե Ռաֆայելյան – ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ,
10. Արմեն Հարությունյան – ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական,
11. Պետիկ Մկրտչյան – ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ:

Հավելված 2
ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի
սեպտեմբերի -ի N հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհրդի

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր խորհրդակցական մարմին և ձևավորվում ու գործում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի և սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

2. Խորհրդի գործունեության նպատակը ՀՀ դատախազության ստորաբաժանումներին իրենց գործառույթներն իրականացնելիս գիտամեթոդական աջակցություն ցուցաբերելն է:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ինքնուրույն կամ ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման միջոցով համագործակցում է ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և ակադեմիական կենտրոնների, ինչպես նաև օտարերկրյա իրավապահ մարմինների համանման խորհուրդների հետ:

4. Խորհուրդը բաղկացած է Խորհրդի նախագահից, անդամներից և պատասխանատու քարտուղարից:

5. Խորհրդի անդամներին նշանակում է ՀՀ գլխավոր դատախազը: Խորհրդի անդամ կարող են նշանակվել իրավունքի բնագավառում գիտական աստիճան և բարձր հեղինակություն ունեցող իրավաբան գիտնականներ, ինչպես նաև ՀՀ դատախազության համակարգում դատախազի պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձինք:

6. ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է իր հրամանով դադարեցնել Խորհրդի նախագահի կամ անդամի անդամակցությունը Խորհրդին: Խորհրդի նախագահի կամ անդամի անդամակցությունը կարող է դադարեցվել նաև իր համապատասխան դիմումի առկայության դեպքում:

7. Խորհուրդը գլխավորում և նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, ում նշանակում է ՀՀ գլխավոր դատախազը: Խորհրդի նախագահը, ի թիվս այլնի, իրականացնում է սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված գործառույթները:

8. Խորհրդի նիստից Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նիստին ներկա անդամներն ընտրում են նիստը նախագահող:

9. Պատասխանատու քարտուղարը նշանակվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով՝ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության դատախազների թվից: Վերջինս մասնակցում է Խորհրդի նիստերին առանց ձայնի իրավունքի և պատասխանատու է Խորհրդի նիստերի արձանագրման, որոշումների նախագծերի կազմման և այլ աշխատանքային հարցերի համար:

10. Խորհրդի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան չորս ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը գումարվում են ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքում (ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5):

11. Խորհրդի նիստերին քննարկման նպատակով հարցեր ներկայացնելու իրավունք ունեն ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները, ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

12. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին: Նիստերի օրակարգը կազմում է Խորհրդի նախագահը, որը նախապես ծանոթացման նպատակով պատասխանատու քարտուղարի միջոցով ուղարկվում է Խորհրդի անդամներին:

13. Խորհրդի որոշումները կրում են խորհրդատվական բնույթ և ընդունվում են Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

14. Խորհրդի որոշումներն ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազին: Խորհրդի որոշումները կարող են կենսագործվել ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով:

15. Խորհուրդը.

1) քննարկում և մշակում է գիտականորեն հիմնավորված խորհրդատվական բնույթ կրող նյութեր՝ դատախազական գործունեության բոլոր ուղղություններով՝ իրավակիրառ պրակտիկայի խնդրահարույց հարցերի վերաբերյալ,

2) քննարկում է հանցավորության շարժընթացը, ներկայացնում առաջարկներ հանցավորության դեմ պայքարի ուղղությունների և եղանակների վերաբերյալ,

3) ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ՝ քննարկում է նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր և ներկայացնում իր դիրքորոշումը դրանց վերաբերյալ,

4) ամփոփում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի զարգացումները և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնում համապատասխան տեղեկանքներ,

5) ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ իրականացնում է գիտական հետազոտություններ վիճելի կամ մասամբ կարգավորված իրավադրույթների կապակցությամբ, մշակում կիրառելի դիրքորոշումներ,

6) ամփոփում է դատախազության գործունեության ուղղությունների վերաբերյալ լավագույն միջազգային փորձը և ներկայացնում համապատասխան առաջարկներ,

7) ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ՝ կարող է իրականացնել այլ գործառույթներ:

16. Խորհրդի անդամը.

1) քննարկման նպատակով ներկայացնում է առաջարկներ հանցավորության դեմ պայքարի, դատախազական հսկողության տեսության և պրակտիկայի, դատախազության ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման ակտուալ խնդիրների վերաբերյալ,

2) մասնակցում է Խորհրդի նիստերին, Խորհրդի նախագահի համաձայնությամբ առանձին հարցերի վերաբերյալ հանդես է գալիս զեկուցմամբ,

3) ՀՀ գլխավոր դատախազի համաձայնությամբ՝ կարող է մասնակցել ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերին,

4) ՀՀ գլխավոր դատախազին գրավոր կամ բանավոր ներկայացնում է իր չհամընկնող դիրքորոշումը Խորհրդի նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ:

17. Խորհրդի գործունեությունը լուսաբանվում է ՀՀ դատախազության պաշտոնական էլեկտրոնային կայքի և «Օրինականություն» հանդեսի միջոցով: